





# Ազդարարության Trumpet's Sound փոռ

51-րդ ՏԱՐԻ, ԱՎԱՏՐԱՆԻԱ  
ՄԱՅԻՍ - ՀՈՒՆԻՍ 2020





# Հայ Ավելարանական Եղբայրների Եկեղեցի ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH

BI MONTHLY CHRISTIAN PUBLICATION  
PUBLISHED BY THE  
ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH  
112 SAILORS BAY ROAD, NORTHBridge,  
NSW 2063 Australia

PASTOR HRATSH KIUJIAN  
ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH  
PO BOX 1593, CHATSWOOD NSW 2057  
email: pastor@armenianbrethren.org  
URL: www.acmaust.org

«ԱԶԴԱԾՐՈՒԹՅԱՆ ՓՈՂ» երկամսյա թերթը Սիդնեյի Հայ Ավելարանական Եղբայրների Եկեղեցու հրատարակություն է: Պատասխանատու խմբագիր՝ հովիվ Հրաչ Գույուճյան:

Այս թերթը անվճար բաժանվում է հայրենիքում: Ցանկացողները կարող են դիմել նշված հասցենով:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Բացի Ինձանից ուրիշ աստվածներ չունենաս .....	Հովիվ՝ Հրաչ Գույուճյան
Դու և ես .....	Հովիվ՝ Գառնիկ Աբրելյան
Սաղմոս 2 .....	Դուն Սթորմը
Մատթեոս 8:1-13 .....	Ռաֆֆի Չափարյան
Հովհաննեսի հայտնությունը և լոյթ նամակները (2) .....	QMBC պանորամա
Հովիս Աստված .....	Նեյլ Բուքման
Ոչ ոք Հիսուսի նման չի հասկանում .....	Վեր.՝ Հովսեփ Հովսեփյան
Հաշտության պաշտոնը և պատգամը .....	Վեր.՝ Հապիկ Ալաճաճի
Միասին կարող ենք .....	Քաղված
Քաջացի՞ր, քանզի Աստված վերահսկում է .....	Դոկտ. Զեպով Բասսարա
Հոգևոր ուրախություն .....	Վարդան Սարգսյան

## Բացի Ինձանից ուրիշ աստվածներ չունենաս

**Ա**ռաջին պատվիրանն ասում է. «Բացի Ինձանից ուրիշ աստվածներ չունենաս»:

Այն, մենք փրկված ենք և այլևս իհն պատվիրաններով չենք ապահով: Բայց Հիսուսը շխախտեց որևէ պատվիրան: Պատվիրանները Աստծո կողմից մեզ տրված հրամաններ են, որպեսզի կարողանանք Իր համար հաճելի կյանքով ապրել: Այս պատվիրանները մեզ պահում են աշխարհից ու չարից:

Որպես մարդ՝ մենք շատ աստվածներ ենք ստեղծում մեզ համար, մի բան, որը սիրում ենք և առանց դրա չենք կարողանում ապրել, անհամբերությամբ սպասում ենք նրան, նա գրավում է մեր միտքը և այլ բաներից հեռու է պահում:

Արդյոր Աստված առաջին տեղը գրավում է ձեր կյանքում, թե՞ զբաղված եք այլով և աստվածահաճո բաների համար երբեք ժամանակ չունեք: «Եթե Նա ամեն ինչի Տերը չէ, ուրեմն Նա Տեր չէ»: Եթե Նա ձեր կյանքում առաջին տեղը չի զբաղեցնում, եթե Նրա մասին չեք խորհրդածում, Աստվածաշունչ չեք կարդում, չեք աղոթում, Նրա հետ չեք հաղորդակցվում, Աստվածաշունչ չեք սերտում, եկեղեցական ժողովների չեք մասնակցում, հոգևորի համար ժամանակ չունեք, ուրեմն ձեր կյանքում այլ բաներ կան, որոնք առաջնային են ձեզ համար:

«Քեզ աստվածպաշտությամբ մարզի՛ր» (Ա Տիմ. 4:7): Կյանքում Աստծուն առաջին տեղը տալու համար ինքներս մեզ պետք է մարզենք, պետք է ծրագրենք մեր օրը, ավելի ուշադիր քննենք այն բաները, որոնք զբաղված են պահում մեզ. դրանք կարող են լինել ձեր հանգիստը, զվարճությունները, սիրելի զբաղմունքները, աշխատանքը...., և եթե դրանցով շափազանց զբաղված եք, ուրեմն զգույշ եղեք, որ ստրուկ չդառնաք ու թիկունք չդարձնեք աստվածային բաներին:

Կող. 3:2-ը կյանքիս մեջ շատ օգտակար եղավ. «**Վերին բաների մա-**

**սին մտածեցե՞ք»:** Զեր անձերը աստվածահաճն գործերով զբաղված պահե՛ք, խնդրե՛ք Տիրոջը, որ ձեզ ծանրաբեռնի ծառայության համար, խնդրե՛ք ձեր երեցներին կամ հովիվներին եկեղեցում պարզ պարտականություններ տալ ձեզ, օրինակ՝ եկեղեցու սրահը մաքրելը, մեքենայով մարդկանց տուն հասցնելը և այլն: Դուք կզարմանաք, թե ինչպես Աստված կարող է հասարակ մարդուն իր փառքի համար օգտագործել:

«Բացի Ինձանից ուրիշ աստվածներ չունենաս»: Եթե Նա ձեր Աստվածն է, ուրեմն ձեր ամբողջ կարողությամբ ծառայե՛ք Նրան լավագույն ձևով, ծառայե՛ք Նրան առանց որևէ վարձատրության ակնկալիքի, քանի որ ձեր վարձատրության գանձերը Երկնքում պահված են ձեզ համար:

Տերը օրինի ձեզ:

Հ. Գ.

## Դու և Ես

1. Դու՝ Արարիշդ ողջ տիեզերքի,  
Հյուրանոցում հանգիստ չգտար,  
Տերը լինելով բարիքի, բերքի՝  
Աշխարհից հեռու մի գոմում ծնար:
  
2. Դու իմ մեղքերը Քոնն համարեցիր,  
Ես իմերն այլոց վրա եմ բարդում:  
Տասը հազար քանքարս հեշ արեցիր,  
Լումայի համար գլուխ եմ ջարդում:
  
3. Դու իմ պատճառով երկինքը քողիր,  
Ես չեմ ցանկանում երկիրը լքել:  
Աստվածությունդ մարդկությամբ փոխիր,  
Թույլ տվեցիր սուրբ երեսիդ քքել:

4. Դու վշտերի ու ցավի տեր եղար,  
Ես չեմ դադարում հաճույքը ման գալ:  
Իմ հանցանքներին դատախազ չեղար,  
Ինձնից դժվար է ներում ստանալ:
  
5. Դու Երիքովի ճամփեքին աղտոտ,  
Կույր Բարդիմնոսի աշքերը բացի՞ր:  
Ես՝ կասկածամիտ, անհույս ու վախուկոտ,  
Չկարողացա լինել անքասիր:
  
6. Դու չզզվեցիր սամարացի այն  
Մեղավոր կնոջ ձեռքից ջուր խմել:  
Ես՝ մեղավորս ու պիղծս, սակայն,  
Բաժակ ու աման սիրում եմ զննել:
  
7. Դու մեղավորի ու մաքավորի ընկերը դարձար,  
Ես՝ հանցազործս, փախսա նրանցից:  
Կեղծավորներին հանդիմանեցիր խրոխստ, համարձակ,  
Ես՝ շողոքորբս, գոհ եմ ինձանցից:
  
8. Դու սուրբ ծնկներդ ծալեցիր խոնարհ  
Ու իմ ոտքերը լվացիր կեղտոտ:  
Ես ցանկանում եմ, որ համայն աշխարհ  
Հպատակեմ ինձ մտքովս մրոտ:
  
9. Դու երանելի համարեցիր լոկ  
Հոգով աղքատին, խոնարհին, հեղին:  
Ես նախանձում եմ այն կյանքին բարվոր,  
Որ պատկանում է հարուստ ուժեղին:

10. Դու, որ կարող ես առանց արբանյակ,  
Իշնել երկնքից, նորից բարձրանալ,  
Գերադասեցիր մի էշի քուռակ.  
Ես այդ չեմ կարող միջոց համարել:
11. Դու հլու, հնազանդ, խաչդ շալակած,  
Անխոս բարձրացար սարը Գողգոթա:  
Ես Պետրոսի պես անունդ ուրացա,  
Թշնամիների հրով տաքացա:
12. Դու Գեթսեմանի գիծերն այն մռայլ  
Երեսիդ վրա ընկար Հոր առջև:  
Ես փորձության մեջ խառն այլևայլ,  
Խորհում եմ ելքեր, մտքեր խաչաձև:
13. Դու խաչողներիդ համար աղոթքով,  
Բարիք խնդրեցիր երկնավոր Հորից:  
Ես չեմ դադարում կշտանալ մեղքով.  
Հանցանքներով եմ ծնվել իմ մորից:
14. Էլ որը ասեմ, էլ որը պատմեմ.  
Դու գեղեցիկ ես բոլոր մարդկանցից:  
Ինձ արարքներիս ամոթն է պատել,  
Չեզ փառքն հավիտյանս, հավիտենից:

Հովիվ՝ Գառնիկ Աբրեյան



## Սաղմոս 2

### (Կարդացե՛ք 2-րդ սաղմոսը)

**Պ**րոշ սաղմոսներ մեսիական են կոչվում: Նրանք հատակ մատնանշում են Տեր Հիսուսին: Նոր Կտակարանում այս սաղմոսները մեջբերված են Հիսուսի մասին հղում ամելու համար: 2-րդ սաղմոսը միանշանակ մեսիական է, այն մեջբերված է ինչպես Գործք Առաքելոց գրքում, այնպես էլ Եբրայեցիներին ուղղված նամակում: Երկու հատվածներն ել կիրառված են Տեր Հիսուսի համար: Նա կոչված է Միաձին Որդի, ով Սիոնի սուրբ լեռան վրա օծված է որպես Թագավոր:

Սաղմոսներուն ժողովուրդներին նկարագրում է որպես Տեր Աստծոն Նրա Օծյալի դեմ ըմբռստացածների: Անմտությամբ նրանք խորհում են, թե կարող են Սեսիային հաղթել, սակայն իրականում քայլում են ամբարիշտների խորհրդով: Ազգերի իշխանները մեկտեղ խորհուրդ են կազմում ու իրենց դիրքերն են հաստատում Տիրոց ու Նրա Օծյալի դեմ: Այս քագավորները մեղավորների ճանապարհներով են ընթանում: Նրանք նման են ծաղրողների, ովքեր կարծում են, թե կարող են կոտրել այն կապերը, որոնցով դեկավարվում են, ու իրենցից հեռացնել Նրա լուծը:

Ազգերը միշտ պատկերացրել են, թե կարող են անտեսել Աստծուն կամ մերժել Նրա պատվիրաններին հնազանդվելը: Մովսեսի ժամանակ փարավոնը հրաժարվեց Տիրոջը հնազանդվելուց այնքան ժամանակ, մինչև Աստված դատաստանով ցույց տվեց Իր քազկի մեծ զորությունը: Ինը պատուհանների ժամանակ փարավոնը հրաժարվեց հնազանդվելուց, բայց Աստված խոնարհեցրեց ու 10-րդ պատուհասով խստորեն պատժեց նրան: Նարուգողոնոսորը մտածեց, թե ինքն իր ուժերով հասել է մեծ փառքի, բայց Աստծո կողմից պետք է սովորեր, որ Երկնքում բնակվող Աստված է բարձրացնում նրանց, ում ուզում է, ու խոնարհեցնում նրանց, ում ուզում է, եթե նրանք չեն ուզում ենքարկվել Իր հեղինակությանը:

Ամենակարողը ծիծաղելու է Իրեն հակառակվողների վրա: Ինչո՞ւ ոչ նշություն եղող մարդը պետք է մտածի, թե կարող է դիմակայել Աստծո կամքին: Երկնքում բնակվող Աստված նայում է մարդու գործերին ու արդարացիորեն արհամարհանքով պատասխանում նրան: Բայց Աստված պարզապես չի ծիծաղում մարդու փորձերի վրա, ով իրեն ուզում է գերիշխան դարձնել: Նա խիստ գործողություններ է ծեռնարկում բոլոր նրանց նկատմամբ, ովքեր չեն ընդունում Իրեն ու Իր Օծյալին: Նա Իր բարկությամբ է խոսելու նրանց հետ և Իր սրտմտությամբ խոռվեցնելու է: Ապագայում, երբ նեռը փորձի իրեն հաստատել որպես աշխարհի գերիշխան, Աստված կդատապարտի նրան, ու այդ ժամանակ Քրիստոսը արդարությամբ կթագավորի աշխարհի վրա:

Աստված որպես անհերքելի փաստ հստակեցնում է, որ Իմքն Իր Թագավորին օծեց Իր սուրբ լեռան՝ Սիոնի վրա: Կասկած չկա, որ մի օր Տեր Հիսուսը վերադառնալու է ու Իր հազարամյա Թագավորությունը հաստատելու է ամբողջ աշխարհի վրա:

Մեր Տեր Հիսուսի մասին Աստված ասաց. «Դու Իմ Որդին ես, Ես այսօր քեզ ծնեցի»: Տեր Հիսուսը մարդ դարձավ, կատարյալ կյանք ապրեց և քաշարար մահով մեռավ: Այժմ Աստված Նրան ժառանգություն խոստացավ. «Խնդրի՛ Ինձնից, ու հեթանոսներին Քեզ ժառանգություն եմ տալու ու երկրի հեռավորագույն մասերը՝ Քեզ սեփականություն»: Երբ Վերցնի Իր ժառանգությունը, Նա ամբողջովին կտապալի Իր թշնամիներին. «Նրանց կլուրես երկարե գավազանով, կփշրես նրանց՝ որպես բրուտի աման»:

Ո՞րն է սադուերգուի խրատը: Այս աշխարհի թագավորներին ու դատավորներին խորհուրդ է տրված իմաստուն լինել: Իմաստություն է վախով Տիրոջը ծառայելը ու Նրա առջև ակնածանքով ուրախանալը: Շշմարիտ մեծարանքը պետք է Որդուն տրվի. մենք պետք է ընդունենք Նրա հեղինակությունը և անկեղծությամբ ու երկրպագությամբ ծառայենք Նրան:

Որդուն անկեղծ մեծարանք տալու համար հիմնավոր պատճառ կա: Որդուն մեծարելուց հրաժարվողները ստիպված կլինեն Նրա բարկությանը բախվել. նրանք կործանվելու են, երբ Նրա զայրույթը բոր-

բոքվի: Բայց օրինություն կա բոլոր նրանց համար, ովքեր Նրա մեջ ապաստան կգտնեն: Նրանք չեն բախվի Նրա բարկությանը, այլ կփորձառեն Նրա մեծ բարությունը:

Սաղմոսի այս պատզամը ոչ միայն երկրի թագավորները պետք է լսեն: Չատ մարդիկ կարծում են, թե կարող են Աստծուն անտեսել կամ ըմբռստանալ Նրա դեմ՝ առանց որևէ հետևանքի: Բայց Աստված չի ծաղրվում: Այն, ինչ մարդը ցանի, նույնը կհնձի: Գալու է մի օր, երբ Տեր Հիսուսին հնազանդվելը մերժողները ստիպված են լինելու ծունկի գալ Նրա առջև: Յուրաքանչյուրիս համար կարևոր է, որ իման հավատարմորեն հանձնվենք Տեր Հիսուս Քրիստոսին՝ Նրան ընդունելով որպես Տիրոջ ու Փրկչի: Այդ ժամանակ վստահ կարող ենք իմանալ, որ վայելելու ենք Նրա հավիտենական օրինությունները:

Դռն Սթորմը

## **Մատթեոս 8:1-13**

**Լ**եռան քարոզն ավարտելուց հետո Հիսուսը լեռից իջավ: Չատերը, ովքեր հասկացան, որ Հիսուսը նման չէ իրենց դպիրներին և ուսուցիչներին, հետևեցին Նրան: Մի խուճք մարդիկ կային, ովքեր իրենց խնդիրներով ու կյանքի փորձություններով դիմեցին Նրան (Մատթ. 8:2): Հուսահատ մի բորստ հավատում է, որ Հիսուսը կարող է իրեն բժշկել, եթե ուղղակի կամենա:

Զիշ անց ուրիշ մարդու ենք հանդիպում, ով բավականաչափ վըստահ է ու գիտի, որ Հիսուսը կարող է օգնել իրեն: Նա նույնական իր կյանքի հարցերով ու փորձություններով դիմեց Հիսուսին (Մատթ. 8:5-6): Այս մարդը այնքան հավատ ուներ, որ գիտեր՝ եթե Հիսուսը միայն Խոսքով ասի՝ առանց դիպելու կամ մոտ գտնվելու, ապա իր ծառան կբուժվի:

Երկու պատմություններում Հիսուսը բժշկեց մարդկանց: Իրականում Հիսուսը երկրի վրա Իր ծառայության ընթացքում շատ նման

իրաշքներ կատարեց. Նա մարդկանց հարուցանեց, կույրերին տեսողություն տվեց, կաղերին և խոլերին բժշկեց և այլն: Հարցը, որ հաճախ տրվում է, հետևյալն է. «Արդյոք Հիսուսը կարո՞ղ է այսօր բժշկել»:

Այս հարցի պատասխանն է. «Այո՛, Հիսուսը կարող է բժշկել այսօր»: Աստվածաշունչը հիվանդներին քաջալերում է, որ աղորեն (Հակ. 5:14): Այնուամենայնիվ, բժշկության մասին շատ թյուրլմբռնումներ կան այսօր: Շատերն ասում են. «Հիսուսը նույնն է երեկ, այսօր ու հավիտյան», ու պնդում են՝ քանի որ Հիսուսը չի փոխվում, ուրեմն ինչպես Ինքը և առաքյալները բժշկեցին մարդկանց, այնպես էլ հիմա կկատարի:

Ճիշտ է, Հիսուսը նույնն է Իր աստվածային բնույթով. Նա չի փոխվում: Նա նույնն է նաև Իր զորությունով (ամենալարողությունով). Նա կարող է մարդկանց բժշկել այսօր և բժշկում է: Այնուամենայնիվ, Սուրբ Հոգու ծառայությունը փոխված է այն իմաստով, որ Նա այլևս չի միջամտում մարդկային պատմության մեջ կամ Իրեն չի հայտնում այնպես, ինչպես առաջ էր հայտնում: Աստված անցյալում շատ քաներ արեց, որոնք հիմա չի անում. արարչագործությունը, ջրիեղեղը, ուղղակիորեն և քացահայտորեն մարդկանց հետ խոսելը, մարգարեներին և առաքյալներին Իր Խոսքերը գրել պատվիրել.... Քանի որ Աստված ավարտեց Իր հատուկ հայտնությունը, Նա այլևս չի խոսում մարդու հետ՝ նոր քաներ հայտնելու համար, ինչպես ումանք պնդում են՝ ասելով. «Հիսուսը երազիս մեջ երևաց ու ասաց այս կամ այն քանը անել»:

Աստված, Իր նպատակների համաձայն, տարբեր կերպերով գործեց մարդկային պատմության մեջ: Ահա թե ինչո՞ւ 7 տարվա Մեծ նեղության ժամանակաշրջանը լինելու է պատմության մեջ երբեմն չկըրկընվող իրադարձություն: Աստված այնպես է ցուցադրելու Իր վեհությունն ու զորությունը, ինչպես անցյալում երբեմն չի ցուցադրել: Նա հայտնվելու է որպես քազակության մասնակի Թագավոր և տերերի Տեր ու Իր զայրույթը թափելու է այնպես, ինչպես պատմության ընթացքում երբեմն չի արել:

Հետևաբար Աստված այսօր բժշկում է հիվանդներին, քայց ոչ այնպես, ինչպես Խնճը կամ առաջյալները արեցին աղոթքով, Խոսքով կամ դիախելով: Աստված այլևս այդ կերպ չի գործում: Իսկ ինչո՞ւ Հիսուսը այդպիսի հրաշքներ կատարեց (Մատթ. 8:4): Առաջյալների պատգամը նույնպես հաստատվեց նշաններով (Մարկ. 16:17-18):

Այդ հրաշքները իր ով լինելու վկայության համար էին. Նա Աստծո Որոշն է, երկնքի ու երկրի Արարիչը: Հիսուսի հրաշքները վավերացրին իր Անձի մասին իր պնդումը (Հովհ. 2:11, Հովհ. 20:30-31):

Նույնը ճշմարիտ է առաջյալների պարագայում (Մարկ. 16:20): Ո՞ո՞նք էին Մարկ. 16:17-18-ի նշանները: Երբ այդ վավերացվեց և հատուկ հայտնությունը ամբողջացավ (Աստվածաշունչը). Աստված փոխեց Սուրբ Հոգու գործելառությունը: Իրականում սա տեսնում ենք նաև առաջյալների ժամանակ, ովքեր իրենց ծառայության ավարտին չկարողացան բոլորին բժշկել (Բ Տիմ. 4:20, Բ Կորնթ. 12: 7-9ա, Ա Տիմ. 5:23): Մենք պետք ենք հասկանանք, որ նույնիսկ Հիսուսի ծառայության ընթացքում ոչ բոլորը բժշկվեցին: Այնպես չեն, որ աշխարհի բոլոր հիվանդները բժշկվեցին, երբ Հիսուսը երկրի վրա էր (Հովհ. 5:1-9). շատերից միայն մի քանիսը բժշկվեցին:

Աստված տակավին բժշկում է այսօր: Երբ անձը հիվանդ է, պետք է աղոթի, և մյուսները պետք է աղոթեն հիվանդների համար ու վստահեն Տիրոջ կամքին ու ժամանակին, որպեսզի անձը բժշկվի: Այնուամենայնիվ, քանի որ այլևս պատգամը կամ անձը վավերացնելու կարիք չկա, այլևս նշանների կարիք չկա, քանի որ Աստծո Խոսքն ամբողջական է, և Աստված այն հայտնել է այնքանով, որքանով պետք է իմանանք: Հետևաբար այսօրվա այսպես կոչված «բժշկության ծառայությունները» և «բժշկողները» շատ անտեղին, կեղծ ու ոչ սուրբ գրային են: Ահա թե ինչու է կարևոր Աստվածաշունչը կարդալը: Ի դեպ, պարտադիր չեն, որ կեղծ մարգարենները ամեն ինչ սխալ ասեն կամ անեն կեղծ կոչվելու համար: Եթե նրանց ասածի կամ արածի մեկ մասը սխալ է, ապա նրանք կեղծ ուսուցիչներ են: Ճիշտ այնպես, ինչպես Աստվածաշունչն է ճշմարտություն ամբողջությամբ, ոչ թե մասամբ:

Մատք. 8:13-ը նույնպես սխալ է մեկնաբանվում: Վստահ եմ, որ զիտեք կամ լսել եք այսպիսի արտահայտություններ. «Կարևոր հավատ ունենալն է», «Քանի դեռ ինչ-որ բանի կիավատաս...», «Ես այսպես կիավատամ», «Կարևոր չէ, թե ինչ ես անում կամ ինչպես, քանի դեռ հավատ ունես» և այլն...:

Եկեք վերլուծենք Հիսուսի ասածները: Ի՞նչ է նշանակում «.... Ինչպես դու հավատացիր» խոսքը: Ինչպես և ինչի՞ն հավատաց հայուրապետը: Նա 100%-ով հավատաց միայն Հիսուսին, և որ Նրա Խոսքը բավարար էր բուժելու համար (Մատք. 8:8ը): Այդպես արեց նաև բորսոր (Մատք. 8:2ը): Նրանք Հիսուսի մասին սխալ կարծիք չունեին, նրանց հավատը սեփական հասկացողությամբ չէին մեկնաբանում:

Նրանք հավատացին, որ Հիսուսն Աստծո Որդին է, Աստծո խոստացյալ Սեսիան: Նրանք ամբողջովին հավատացին Հիսուսին, և որ Նա կարող էր բժշկել իրենց: Իրենց հավատի մեջ որևէ սխալ բան չկար: Հիսուսը հաստատեց, որ նրանց հավատը ճիշտ է, և քանի որ այդպես էր, Նա պարզեց նրանց խնդրանքը:

Հետևաբար ինձ և ձեզ համար կարևոր է քրիստոնեության, հավատի ու փրկության մասին եղած բոլոր սխալ պատկերացումներն ու բյուրըմբռնումները մի կողմ դնել: Այդ իսկ պատճառով շատ կարևոր է Սուրբ Գիրքը կարդանք և ուսումնասիրենք, որպեսզի ճիշտ հավատ ունենանք, ճշմարտությանը հավատանք և ոչ թե մշակույթին կամ հասարակության հավատանք և ոչ թե մաքրենք ու վերականգնենք մեր միտքը բոլոր կեղծիքներից, սուտ ուսմունքներից և Աստվածաշնչի սխալ ընկալումից, որպեսզի իմանանք, թե որն է ճշմարտությունը և Աստծո կամքը (Հոռմ. 12:2): Սա կիմնի միայն այն ժամանակ, երբ շարունակաբար աճենք Աստծո Խոսքում (Բ Պետ. 3:18):

Բաֆֆի Չափարյան



## Հովհաննեսի հայտնությունը և յոթ նամակները (2)

**Ա**պացույցներն ուսումնասիրելուց հետո մեզ համար ակնհայտ կդառնա, որ Տերն օգտագործեց այս յոթ նամակները՝ առաքելական ժամանակներից մինչև այս ժամանակների քրիստոնեական եկեղեցու պատմության հիմնական իրադարձությունները նկարագրելու համար: Այլ կերպ ասած, Տերը Հովհաննեսին տվեց եկեղեցու պատմության մարգարեությունը: Իհարկե, մենք այժմ կարողանում ենք համեմատել այդ մարգարեությունները վերջին երկու հազար տարիների ընթացքում կատարված իրադարձությունների հետ: Հարկ ենք համարում նշել, որ Հայտնություն գիրքն ուսումնասիրելիս կիանողի-պենք հատվածների, որոնք լիովին չենք կարողանալ ըմբռնել, բայց ապագայում կարողանալու ենք լիովին հասկանալ դրանք, քանի որ համաշխարհային իրադարձությունների ականատեսն ենք լինելու:

Այս յոթ նամակներում խոսվում է վերջին երկու հազար տարիների մի քանի հիմնական իրադարձությունների մասին. դրանցից են եպիսկոպոսների իշխանության գալը, հուդայականության շարժումը, Ներոնից մինչև Դիոկղետիանոս մարտիրոսական դարաշրջանը (մ.թ. 100-312 թթ.), աշխարհի հետ խառնվելը, Արիոսի հերետիկոսության պարտությունը (մ.թ. 381թ.), հռոմեական կաթոլիկության հաստատումը (590թ. - մեր օրեր), բռղոքականության հաստատումը (մ.թ. 1517թ. - մեր օրեր), Քրիստոսի երկրորդ գալստյան ճշմարտության վերականգնումը (մ.թ. 1827թ. - մեր օրեր) և վերջապես, մեր օրերի անտարքերությունն ու աշխարհիկությունը: Եկեք յուրաքանչյուր նամակը դիտարկենք մարգարեական տեսակետից:

Եփեսոս նշանակում է ցանկալի: Սկզբում Եփեսոսի եկեղեցին լի էր Տիրոջ հանդեպ սիրով, և դա այն էր, ինչը նրանց քաշում էր դեպի Տերը: Պողոսը նախազգուշացրեց Եփեսոսի երեցներին՝ ասելով. «Ես գիտեմ, որ իմ հեռանալուց հետո հափշտակող գայլեր են մտնելու ձեր մեջ, որ չեն խնայելու հոտը: Եվ ձեր միջից էլ դուրս կգան մարդիկ, որ սխալ բաներ են խոսելու՝ աշակերտներին իրենց ետևից տա-

նելու համար» (Գործ 20:29-30): Մինչև 1-ին դարի ավարտը Եփեսացիներն արդեն հասցրել էին իրենց առաջին սերը լրել (Հայտ. 2:4): Տերը գովեց նրանց՝ չար մարդկանց ու կեղծ առաքյալներին հակառակվելու, Իր անունը պահելու, նիկողայոսականների (Եպիսկոպոսության նախակարապետների) գործերը ատելու և չբոլանալու համար: Այնուամենայնիվ, նրանք բողեցին իրենց առաջին սերը: Թերևս Մարքայի նման նրանք շատ զբաղված էին օրինական գործերով, բայց շեղվել էին Տիրոց վրա կենտրոնանալուց:

Այսպիսով, մենք տեսնում ենք, որ նույնիսկ եկեղեցու պատմության այս վաղ փուլում շարիք է ներմուծվում, ինչը հանգեցնում է բարոյական ու հոգևոր անկման: Այս միտումը շարունակվեց հաջորդ դարերում մինչև ռեֆորմացիան, երբ աստվածաշնչյան որոշ ճշմարտություններ վերականգնվեցին:

Զմյուռնիա նշանակում է զմուս: Զմուսն օգտագործում էին մեռելներին զմոսելու համար: Դրա բուրավետ հատկություններն ստանալու համար նախ պետք էր այն ճգնել. այն տառապանքի խորհրդանշանն էր: Մասնավորապես մ.թ. 100-312 թթ.-ին քրիստոնյաներին հալածանքների ենթարկելու միջոցով սատանան փորձեց եկեղեցին կործանել: Քրիստոնյաները հալածվում էին, և հազարավորները նահատակվեցին, քանի որ չին ուրանում Քրիստոսի անունը: Հռոմի կայսրը պահանջեց, որ իրեն երկրպագեն որպես աստծո, բայց քրիստոնյաները չկարողացան դա անել, ուստի զրկվեցին իրենց ունեցվածքից և խշտանգումների ու մահվան ենթարկվեցին:

Զմյուռնիայի եկեղեցուն ուղղված նամակում Տերն ասում է. «Գիտեմ քո գործերը, նեղությունը և աղքատությունը, (բայց դու հարուստ ես)....» (Հայտ. 2:9): Իհարկե, այս խոսքերը կարելի է ասել հռոմեական կատաղի հալածանքների ժամանակ ապրող քրիստոնյաների վերաբերյալ: Զնայած նրանք նյութապես աղքատ էին, սակայն հավատով հարուստ էին, և նրանց սպասվում էր մեծ ժառանգություն: Նրանք պատրաստ էին վայրի գազանների կողմից պատառ-պատառ լինելու, կամ այրվելու, կամ ցցի վրա կախվելու (տե՛ս Հակ. 2:5, ԱՊետ. 1:3-9, Հայտ. 2:10):

Պերգամոն նշանակում է ամուսնություն կամ բարձրացում: 4-րդ,

5-րդ և 6-րդ դարերում սատանան փորձեց եկեղեցին կործանել՝ նրան դնելով աշխարհի հովանավորության տակ, որն էլ իր հերթին հանգեց-իւց Աստծո Խոսքի հիմնական ճշմարտությունների լրմանը: Հիշեց-նենք, որ Կոստանդիանոսը դարձավ կայսր ու վերջ տվեց հալածանք-ներին: Նա նաև զավթեց եկեղեցու գլխավորի դիրքը և եպիսկոպոս-ներին ու այլ քրիստոնյաներին պարզեցներ ու կոչումներ շնորհեց: Այդ ժամանակ շատերը անվանական քրիստոնյաներ դարձան Կոստան-դիանոսի իշխանությունից օգտվելու համար: Այդ ժամանակ հաս-տատվեց եպիսկոպոսականության (նիկողայոսականության) և աշ-խարհիկ դասի հայեցակարգը, որը հետագայում վերածվեց պապա-կանության մոդելին: Երեցների՝ մարդկանց ծառայելու աստվածային կարգը կորցրեց իր իմաստը: Տեր Հիսուսի ուսմունքը նույնապես մո-ռացվեց. Նա ասել էր. «Քայլ դուք «Ռաբբի» չկոչվեք, որովհետև մեկն է ձեր վարդապետը, որ Քրիստոս է և դուք բոլոր եղբայրներ եք» (Մատթ. 23:8): Հովհանների մասին Պետրոսը գրում է. «Ո՛չ թե Աստծո ժառանգության վրա տերություն անելով, այլ հոտին օրինակ ծառա-յելով» (Ա Պետ. 5:3):

Պերգամոնի անվան նշանակությունը ենթադրում է ամուսնության կամ եկեղեցու և պետության միավորում, ինչպես նաև հոգևորական-ների՝ կայսրության ազնվականների հետ արողին նստելու հնարա-վորություն: Կոստանդիանոսն այս բաները առաջ թերեց: Եպիսկոպո-ները այլևս չեն սպասում Քրիստոսի երկրորդ գալստյանը. նրանք հայտարարեցին, որ Կոստանդիանոսի կայսրությունը Քրիստոսի թա-գավորությունն է:

Հիշեցնենք նաև, որ արիստականության հերետիկոսությունը, որը կասկածի տակ էր դնում Տեր Հիսուսի աստվածությունը, Կոստան-դիանոսի կազմակերպած ատյանի կողմից վերջ դրվեց: Մենք նշե-ցինք, որ դրա արդյունքներից մեկը Նիկիայի վեհաժողովը եղավ, որի հայտարարություններից մեկում Տեր Հիսուս Քրիստոսի մասին աս-վում է, որ Նա «Աստված Աստծո, Լուս ի Լուս, Աստված ճշմարիտ Աստծո ճշմարտե, ծնունդ և ոչ արարած: Նույն ինքն ի բնութենք Հոր»: Մենք հավատում ենք, որ Աստված պատվիրեց այս վեհաժողովը, որպեսզի քրիստոնեությունը կարողանա պահպանվել նման լուրջ սխալներից (Հայտ. 2:13):

Թիվատիր նշանակում է շարունակական պատարագ կամ աշխատանքի պատարագ: 7-րդ դարը ականատես եղավ հռոմեական կաթոլիկ եկեղեցու հաստատմանը, իսկ Հռոմի եպիսկոպոսը ճանաչվեց որպես Քրիստոսի տեղապահը ու երկրի վրա գտնվող եկեղեցու գլուխ: Այդ ժամանակահատվածում հաստատվեց պատարագի կարգը, և այն ներկայացվեց որպես կենդանիների ու մահացածների մեղքերի համար մատուցված շարունակական պատարագ: Այլ կերպ ասած, նրանք պնդում էին, որ խաչի վրա Քրիստոսի կատարած աշխատանքը բավարար չէր: Բայց Սուրբ Գրքից մենք հստակ տեսնում ենք, որ «այս Մարդը (Քրիստոսը), մեղքերի համար մեկ անգամ պատարագ մատուցելով, հավիտենապես նստեց Աստծո աջ կողմում» (Երք. 10:12): «Նա (Քրիստոսը) պետք է շատ անգամներ չարչարվեր աշխարհի սկզբից ի վեր, բայց հիմա՝ ժամանակների վերջում, մեկ անգամ ընդմիշտ հայտնվեց՝ Իր անձի պատարագումով մեղքը ջնջելու համար» (Երք. 9:26):

8-րդ դարը բնութագրող իրադարձություններից են միսիոներական ծառայությունը Գերմանիայում (մ.թ. 716 թ.), Տուրի ճակատամարտը (մ.թ. 732թ.), երր իսլամական արշավանքները հետ մղվեցին, Կառլ I Մեծի բարգավաճ ու հզրի բազավորությունը (մ.թ. 800-814թ.), Վլադիմիր անունով ոռու իշխանի դարձի գալը (մ.թ. 1173թ.) ու քրիստոնեության մուտքը Ռուսաստան, եկեղեցու բաժանումը Արևելքի ու Արևմուտքի միջև (մ.թ. 1054թ.), երր Հռոմն ու Կոստանդնուպոլիսը բաժանվեցին իրարից, Վալդենսների բարձրանալը (մ.թ. 1173թ.), Լատերանի IV ժողովը (մ.թ. 1215թ.): Այս ժողովը, որը դեկավարում էր Հռոմի Ինոկենտիոս III պապը, հաստատեց հռոմեական կաթոլիկ եկեղեցու վարդապետությունը, ըստ որի՝ «պապը Քրիստոսի տեղապահն է», հետևաբար և «միջնորդ Աստծո ու մարդու միջևն. նա Աստծուց ցածր է, բայց մարդկանցից մեծ»: Գոյափոխությունը (հաղորդության ժամանակ գինու ու հացի վերափոխումը Քրիստոսի մարմնի ու արյան) պաշտոնապես ընդունվեց որպես դոգմա, և հաղորդության մասնակցելն ընդունվեց որպես փրկությունը ատանալու կարևոր պայման:

(Շարունակելի)

## Հույսի Աստված

«Արդ, հույսի Աստվածը քող ձեզ ամենայն բերկրությամբ ու խաղաղությամբ լցնի, ձեր հավատալով, որպեսզի Սուրբ Հոգու զորությամբ հույսով առատանաք» (Հոռմ. 15:13):

Պողոսը հիանալի կարողություն ուներ մեծ ու ճոխ ճշմարտությունները մի քանի բառով արտահայտելու: Հռոմեացիներին ուղղված նամակի այս մեջքերումը ասվածի վառ օրինակ է:

**Ո՞վ է «Հույսի Աստված»-ը:** Նա է, ով Իր բնույթով ու գործերով փառափոր ճակատագրի աղբյուրն ու գրավականն է, որին Աստծո զավակները վստահությամբ ու եռանդով կարող են սպասել: Աշխարհային հույսը ոչ ավելին է, քան դրական մտածելակերպը, բայց մեր հույսը հաստատված է հույսի Աստծո վրա:

**«Արդ՝ հույսի Աստվածը...»:** Այո՛, հույսի Աստվածը, ով մեզ Իր հետ հաղորդակցության է հրավիրում, ուզում է, որ ճշմարիտ ու կենդանի հույս ունենանք: Հավատի պես հույսը կարևոր է քրիստոնյայի կյանքի համար: Իրականում Աստծո հետ մտերիմ լինելու աստիճանը կարող ենք չափել անձի սրտում եղած հույսի չափով: Հույսի Աստծուն ճանաչել նշանակում է հույս ունենալ:

Միբելի՛ Աստծո զավակ, արդյոք միայն ա՞յս կյանքի համար ես ապրում: Արդյոք Դուստի<sup>9</sup> նման ես, ով ընտրեց ներկա առավելությունը, թե՛ Արքահամի նման ես, ով հույսով հաշվեց աստղերը: Աստծո հետ հաղորդակցելով և Նրա ճշմարտության լույսի տակ մնալով՝ մենք ավելի ու ավելի ենք ձգտում ու ակնկալում Նրա խոստումների կատարումը: Հարությունը մոտ է, մեր հարությունը... Մահը պարտվելու է, ու կյանքը ժայթքելու է, մենք Նրա նման ենք լինելու ու Նրան ենք տեսնելու այնպես, ինչպես որ է: Այդ օրը այս աշխարհն ու կյանքը իրենց բոլոր դժվարություններով ու ցավերով դիտարկվելու են որպես երրևէ պատմված ամենամեծ պատմության կարճ նախաբան:

**«Արդ, հույսի Աստվածը քող ձեզ ամենայն բերկրությամբ ու խաղաղությամբ լցնի...»:** Մեր հույսը հաստատ է: Տերը մեզ այժմ լցնում

Է ուրախությունով ու խաղաղությունով՝ հավատի միջոցով։ Հավատը սուկ մի քանի ճշմարտությունների հանդեպ մտավոր համաձայնությունը չէ։ Տեր Հիսուս Քրիստոսի հանդեպ մեր ունեցած հավատը կապ է ստեղծում մեր ու աներեւոյթ իրականության միջև։ Ինչպե՞ս։ Սուրբ Հոգին կնքում է բոլոր նրանց, ովքեր Աստծո սեփականությունն են, ովքեր խոնարհվում են Որդու առջև, ովքեր իրենց անձերը խոնարհեցնում են և իրենց սիրտն ու կյանքը Նրան են նվիրում։ Մեր մեջ ներբնակվող Սուրբ Հոգին մեզ միավորում է Քրիստոսի հետ։ Նա օգնում է մեզ տեսնելու և ճանաչելու Իր գեղեցկությունը, զորությունն ու բավարարվածությունը։ Քրիստոս Հիսուսի միջոցով ձեռք բերված փառահեղ ազատության և խաչի վրա բափած Իր արյամբ ձեռք բերված հաշտության շնորհիվ մեր մեջ բերկրություն և խաղաղություն է առաջանում։ Շատերը գուցե պնդեն, թե հավատում են, բայց նրանք չեն խոնարհվում, այլ Տիրոջ առջև կանգնած են մնում, կարծես թե ուզում են Նրա հետ բանակցել։ Սա փրկարար հավատ չէ, ոչ էլ այնպիսի հավատ, որը ինչ-որ մեկին ուրախությամբ ու խաղաղությամբ է լցնում։

**«Արդ, հույսի Աստվածը քող ձեզ ամենայն բերկրությամբ ու խաղաղությամբ լցնի, ձեր հավատալով, որպեսզի Սուրբ Հոգու զորությամբ հույսով առատանար»։** Պողոսը երկակի սկզբունքների մարդ չէր։ Նա փափագում էր, որ հավատացյալների կյանքի յուրաքանչյուր մասը հույսով շաղախված լիներ, որպեսզի նրանք էլ Աստծո մեծ ծառաների պես հոգևոր հեռատեսություն ունենային։ Մանկական հավատով սկսած մեր հոգևոր կյանքը առաջնորդում է դեպի առատ հույսը։

**«Արդ, հույսի Աստվածը քող ձեզ ամենայն բերկրությամբ ու խաղաղությամբ լցնի, ձեր հավատալով, որպեսզի Սուրբ Հոգու զորությամբ հույսով առատանար»։** Մենք երբեք հաստատուն հույս չենք կարող ունենալ դրական մտածելակերպի, երևակայության կամ անձնական ջանքերի միջոցով։ Սուրբ Հոգին վերափոխում է մեզ, որպեսզի Աստծո համար առանձնացած լինենք։ Փոխակերպությունը հավատացյալի կյանքում Աստծո զորության ճշմարիտ ապացույցն է։ Այն ինքնիրեն չի դրսեորդվում աշխարհիկների վրա

տպավորություն թողնելու ամպագողակո ցուցադրություններով։ Նրա ապացույցը Քրիստոսի և Նրա Խոսքում հետևողականորեն մնալու վիճակն է, Նրա մեջ անսասան ուրախություն ունենալն է, անկոտրում հավատարմությունն ու առատ հույսը։

«Տե՛ր, ապրի՞ր մեր կյանքում, լցրո՛ մեզ հորդացող հույսով ու փառավորի՞ր Քո անունը»։

**Նեյլ Բուրման**

Խոնարհություն է, եթե մարդիկ քեզ փառաբանում են և պարզեներ տալիս, սակայն դու քո անձի արժանիքներին չես վերագրում, այլ Աստծուն ես փառաբանում, Աստծուց գոհանում և ասում, թե՝ այն Քո ողորմությունից է և ոչ ըստ իմ արժանիքների, ինչպես ասում է Սոլոմոնը. «Որչափ մեծության էլ հասնես, քեզ խոնարի պահիր և շնորի և ողորմություն կզտնես Աստծո առջև»։

Խոնարհություն է, եթե վշտի ես հանդիպում, և նեղություն է քեզ վրա հասնում, դու չես տրտմում, այլ գոհանում Աստծուց. «Ըստ իմ մեղքերի ես ոչ միայն այսչափ, այլև բազում պատիժների եմ արժանի, և օրինյալ է Աստված, որ այս անցավոր կյանքում և մահկանացու մարմնի մեջ իման վշտի արժանացրեց», ինչպես ասում է առաքյալը. «Հոգած եմ նեղությունների, վշտերի, չարչարանքների, որովհետև եթե տկարանում եմ, այդժամ զորանում եմ»։

**Քաղված**

«Որքա՞ն մեծ է Քո բարությունը, որ պահում ես  
Քեզանից երկյուղ ունեցողների համար, որ շնորհում ես  
նրանց, ովքեր իրենց հույսը դրել են Քեզ վրա մարդկանց  
որդիների առջև» (Սաղմոս 31:19):

## Ոչ ոք Հիսուսի նման չի հասկանում

### Ընթերցանություն. Սաղմոս 8

«Ոչ ոք չի հասկանում, նույնիսկ չեն էլ ուզում հասկանալ». Երբեմն այսպիսի մտքեր ենք ունենում, վիրավորվում ենք, տարբեր կարիքներ և փափազներ ենք ունենում, և թվում է, թե ոչ ոք չգիտի ու չի էլ ուզում իմանալ դրանց մասին: Յավը խորանում է, ու չենք հասկանում, թե ինչու ենք անտեսված: Բայց ինչպես կարող են նրանք իմանալ: Գուցեն դու շրջապատված ես մարդկանցով, նրանք քո կողմին են, բայց չեն կարողանում տեսնել քո ներսը, տեսնել, թե ով ես դու իրականում, ինչու ես այդպես զգում կամ վարվում: Արարշագործությունից ի վեր մարդիկ չհասկացված լինելու զգացում են ունենում: Նրանք փորձում են գտնել ինչ-որ բան կամ ինչ-որ մեկին, որը կհասկանա և կօգնի իրենց հաղթահարելու կյանքի հիմնահարցերը: Յավոք, նրանք գալիս են այս եզրակացության, որ ոչ ոք չի հասկանում իրենց ու հոգ չի տանում իրենց մասին: Այդպիսով, պարփակվում են առանձին «բան-տում» կամ հեռանում Աստծոց: Կան նաև շատերը, ովքեր իրենց որոնումների մեջ գտել են մեկին, ով պատրաստ է օգնելու ու ձեռք մեկնելու: Աստված միշտ ուղղակիորեն կամ ուրիշների միջոցով մեզ օգնության ձեռք է մեկնում: Ճիշտ է, որ մարդկանց կողմից միշտ չենք կարող հասկացված լինել, սակայն մեր Արարիշը հասկանում է մեզ:

Լսենք, թե ինչ է ասում Դավիթ թագավորը.

«Ի՞նչ է մարդը, որ դու իիշում ես նրան, և մարդու Որդին, որ դու խնամք ես տանում նրա համար» (Սղմ. 8:4):

Հիսուսն ասաց.

«Սա է իմ պատվիրանը, որ իրար սիրեք, ինչպես որ ես ձեզ սիրեցի, ոչ ոք սրանից ավելի մեծ սեր չունի, որ մեկն իր անձը դնի իր բարեկամների համար: Դուք իմ բարեկամներն եք, եթե անեք, ինչ որ ես պատվիրում եմ ձեզ» (Հովհ. 15:12-14):

Սիրելի՝ ընթերցող, իիշի՛ր սա. քանի որ ոչ Հիսուսի նման չի կարողանում հասկանալ, իենաց դրա համար էլ Նա այս աշխարհ եկավ:

Աստված Ինքը մարմնացավ և փրկության համար չարչարվեց ու խաչվեց: Եսայի մարգարեն ասում է.

«Հիրավի նա մեր ցավերը վեր առավ և մեր վշտերը քեռնեց իր վրա, բայց մենք նրան պատվահարված էինք համարում, Աստծուց զարկված ու նկուն եղած» (Ես. 53:4):

Ամբողջ մարդկությանը ձեռք մեկնելու ավելի անձնվեր եղանակ չեր կարող լինել:

Բարի լուրն այն է, որ մեր Փրկիչը մեռած չէ: Նա կենդանի է և բարեխսում է մեզ համար: Այո՛, Հիսուսը հասկանում է, ինզ է տանում մեր մասին և միշտ պատրաստ է օգնելու մեզ:

Զոն Վ. Պետերսնի հայտնի օրիներգը («Ոչ ոք Հիսուսի նման չի հասկանում») լավ է արտահայտում այս ճշմարտությունը.

«Ոչ ոք Հիսուսի նման չի հասկանում, անզուգական ընկեր է Նա:

Հանդիպիր ողորմության գահի մոտ, այնտեղ անհամբեր քեզ է սպասում Նա:

Ոչ ոք Հիսուսի նման չի հասկանում, եթք մռայլվում են օրերն ու դառնում մթին:

Ոչ ոք այնքան հարազատ չէ, որքան Հիսուսը: Բոլոր հոգսերդ հանձնիր Հիսուսին»:

Հովսեփ Հովսեփյան

## **Հաշտության պաշտոնը և պատգամը**

**Պ**ոլոս առաքյալը Բ Կորնք. 5:18-21-ում Աստծո՝ մեղավորի հետ կնքած հաշտության մասին է խոսում: Եթք ուզում ենք հաշտվել, անմիջապես տեսնում ենք, որ երկու կողմերն իրար հետ հաշտ, համերաշխ և սիրով չեն, այլ հակառակ ու թշնամի:

Աստծո Խոսքի ճշմարտությունից հասկանում ենք, որ ամբողջ մարդկությունը Աստծո թշնամին է՝ Աստծո օրենքը կոտրող, Նրան թիկունք դարձնող, մեղքի մեջ կորած ու Նրանից հեռացած: Սակայն Աստծո և մարդու միջև հաշտություն տեղի ունեցավ Քրիստոսով: Ուստի Աստծո հետ հաշտված մարդուն, այսինքն՝ փրկված Աստծո զավակին, Աստված տալիս է հաշտության պաշտոնը, գործը և պարտականությունը:

Աստծո զավակ դարձած յուրաքանչյուր անձի Աստված տվել է պարտականություն, որ պետք է նախապատվություն ունենա հավատացյափ բոլոր պաշտոնների ու պարտականությունների շարքում:

Հավատացյալը կարող է մեկից ավել պաշտոններ, դիրքեր և պարտականություններ ունենալ, որ իրեն են հանձնված տարրեր մարդկանց կամ հաստատությունների կողմից: Հաշտության պաշտոնը մարդու կամ հաստատության կողմից չէ տրված, այլ Աստծո: Որքան որ Աստված մեծ է ու զերազանց մարդկային որևէ իշխանությունից, նույնքան Նրա՝ մեզ տված հաշտության պաշտոնն ավելի մեծ է, քան մեր ունեցած որևէ պաշտոն:

Այս պաշտոնի հետ Աստված նաև պատգամ է տվել, փրկության պատգամ, որի հիման վրա Աստված, մարդու բոլոր մեղքերը Քրիստոսով ներելով, նրան նոր ստեղծված է դարձնում:

Առաքյալն այս պաշտոնն ունեցող պատգամավորին կոչում է դեսպան: Աստված, որ երկնրում է, մեզ հավատացյալներիս, Իր դեսպաններն է նշանակել, որպեսզի մեզ տրված պաշտոնի համաձայն երկրի վրա ներկայացնենք Իրեն՝ հավատարմությամբ փոխանցելով հաշտության պատգամը, Աստծո թշնամի դարձած մարդկությանը:

Վեր. Հապիա Ալաճաճի

Քաղված՝ «Հոգևոր խորհրդածությունների  
կաթիլներ» գրքից



## Միասին կարող ենք

Սա վաղեմի պատմություն է մի կույրի և մի կադի մասին, որոնք իրար հանդիպեցին անտառում: Երկուսն էլ կորել էին և սկսեցին զրուցել՝ պատմելով իրենց տխոր պատմությունները: Կույրն ասաց.

- Չեմ կարող տեսնել, որ ճանապարհս գտնեմ:

Կաղը գլուխը շարժեց ու պատասխանեց.

- Իսկ ես չեմ կարող քայլել:

Մինչ նատած խոսում էին իրենց նեղությունների մասին, հանկարծ կաղը բացականչեց.

- Հարցը լուծեցի: Դու ինձ քո շալակն ա՛ն, և ես քեզ ցույց կտամ, քե որ ճանապարհով պետք է քայլես:

Այսպես միասին կարողացան ուրախությամբ դուրս գալ անտառից:

Բոլորս էլ այս երկու մարդկանց պես ենք, որ անտառում էին: Երբեմն օգնության կարիք ենք ունենում: Աշխարհի ճնշումները, կյանքի հուսախարությունները և մեղքերը ծուղակն են զցում մեզ, հուսահատության տանում: Փորձում ենք խավարից Լույսի ճամփան գրտնել: Սրա համար Աստված հավատացյալների ընտանիք է տվել մեզ: Յուրաքանչյուրս մի պարզեց ունի, որ Քրիստոսի Մարմնի շինության գործում բաժին ունենանք: Ամեն մեկս կարող ենք մի քաջալերական խոսք ասել հուսախար կամ պայքարող որևէ մարդու: Կարող ենք մեր հավատքն ապրել որպես կենդանի վկաններ: Ոչ ես, ոչ էլ դու միայնակ չենք կարող սա անել: Սակայն միասին կարող ենք՝ օգնելով միմյանց, ինչպես արեցին անտառում կորած կույրն ու կաղը:

«Միմյանց բեռք կրեցեք և այսպիսով կատարեցեք Քրիստոսի օդենքը» (Գաղ. 6:2):

Քաղված՝ «Ավետարեր ձիթենին» գրքից

## **Քաջացի՛ր, քանզի Աստված վերահսկում է**

«Պողոսն էլ վեր կացավ, ծեռքը շարժեց և ասաց. «Ո՞վ Խրայելի մարդիկ, և դո՛ք, որ Աստծուց վախենում եք, լսեցե՛ք: Այս Խրայելի ժողովրդի Աստվածը ընտրեց մեր հայրերին և Եգիպտոսի երկրում պանդստության ժամանակ բարձրացրեց ժողովրդին և հզոր բազուկով նրանց այնտեղից դուրս բերեց: Եվ մոտ քառասուն տարի համբերեց անապատում նրանց դրսւորած վարքին: Եվ երբ Քանանի երկրում յոթ ազգ կործանեց, դրանց երկիրը տվեց նրանց որպես ժառանգություն: Եվ դրանից հետո մոտ չորս հարյուր հիսուն տարի նրանց դատավորներ տվեց՝ մինչև Սամուել մարգարեն»» (Գործը Առաքելոց 13:16-20):

### **Ստեփանոսի օրինակը**

Նկատենք, որ նախաբանը նույն ոճով է, ինչ Գործը 7-րդ գլխում Ստեփանոսի սքանչելի պատգամը: Ստեփանոսը կանգնեց ատյանի առջև, որի անդամ էր Տարտոնացի Սողոսը, և պատմեց Խրայելի պատմությունը, որպեսզի փորձի արթնություն բերել այդ հրեաների մեջ՝ հասկանալու Աստծո սերն ու հոգածությունը և նրանց ազգի ուղղորդումն Իր գերիշխան կամրով: Պողոս առաքյալը երբեք չմոռացավ այդ պատգամի գորությունը: Դա նրա սրտին էր դիպել, կտրել եսափրության փշալարերը ու նրա սրտում հավատքի սերմեր գցել, որոնք ի վերջո հանգեցրին նրա ապաշխարությանը: Ուստի այստեղ նա հետևում է Ստեփանոսի նույն մարտավարությանը:

### **Աստված, ով գործում է**

Պատմության գործերը իմանականում կենտրոնանում են որոշ անձանց վրա, ովքեր ինչ-ինչ արարքներ են գործել՝ սխրանք կամ չարիք: Պատմությունը, ինչպես ներկայացվում է մեզ, մարդկանց գործերի ու ազբեցության ուսումնասիրություն է, սակայն ոչ այս պատմությունը: Այս պատմության կենտրոնը Աստված է, ով գործում է: Առաքյալը մատնանշում է Աստծո գործերի տասնմեկ տարբեր օրինակներ.

Աստված... ընտրեց մեր հայրերին:

Բարձրացրեց ժողովրդին:

Նրանց դուրս հանեց Եզիստոսից:

Աստված նրանց կերակրեց անապատում:

Աստված Քանանի երկրում յոթ ազգ խորտակեց:

Նրանց երկիրը նրանց ժառանգություն տվեց:

Աստված նրանց դատավորներ տվեց:

Ապա նրանք թագավոր ուզեցին, և Աստված նրանց տվեց Սալու-  
յին:

Եվ երբ Նա (Աստված) հեռացրեց նրան,

Նա բարձրացրեց Դավթին:

Եվ վերջապես Աստված Խորայելին տվեց Փրկչին՝ Հիսուսին, ինչ-  
պես խոստացել էր:

Եսայի մարգարեն գրի է առել Աստծո խոսքը. «Ես եմ Աստված, և  
ուրիշը չկա աստված. և ինձ պես մի ջոկը չկա. որ պատմում եմ ա-  
ռաջուց վերջինը, և վաղուց՝ այն, որ չէ եղած. որ ասում եմ, թե իմ  
խորհուրդը պիտի հաստատվի, և անում եմ իմ բոլոր ուզածը... ես  
խոսել եմ, կատարելու էլ եմ, ես որոշել եմ, անելու էլ եմ» (Ես. 46:9-  
11): Առաքյալի պատգամի գագարնակետը Տեր Հիսուսի գալուստն էր:  
Նա մեջքերում է Հովհաննես Սկրտչի վկայակոչումն այն փաստի,  
որ իրենից հետո եկողն այնքան մեծ էր, որ Հովհաննեսն ասաց՝  
ինքն անգամ արժանի չէ նրա կոշիկի կապերն արձակելու:

Դժվարությունների բախսելիս հակված ենք մոռանալու անցյալում  
ցուցաբերած Աստծո հավատարմությունը: Տեսնում ենք միայն շրջա-  
դարձերն ու վտանգավոր արահետը: Հարկավոր է ետ նայել ու տես-  
նել հաղբանակի խինողը, ճանապարհորդող մեր Ուղեկցի ներկայու-  
թյունը, ով խոստացել է մեզ երբեք չքողնել ու չլրել: Քաջացի՛, Նա  
Վերահսկում է:

Դոկտ. Չեսլով Բասսարա

## Հոգևոր ուրախություն

### (Կարդացե՛ք 4-րդ սաղմոսը)

**Պ**ավիթը Սղմ. 4:7-ում Տիրոջն ասում է. «Ուրախություն դրեցիր իմ սրտում՝ նրանց ցորենի ու գինու առատության ժամանակից ավելի»:

Ցորենի ու գինու առատությունը կարելի է ապահովել կամ արդար աշխատանքով, կամ զարտուղի, չար ճանապարհով: Ինձ թվում է՝ Դավիթը նկատի ունի չար ճանապարհով դիզված ցորենն ու գինին: Սաղմոսի մյուս համարները դիտարկելիս տեսնում ենք, որ նա այդ մարդկանց անվանում է ունայնություն սիրողներ (2 հմբ), սուրբյուն վնասողներ, որիշի հաջողությանը չարախոսողներ, մեղք գործողներ (4-րդ հմբ):

Եվ թեկուց ցորենն ու գինին արդար ճանապարհով դիզված լինեն, թե՛ տղամարդու և թե՛ կնոջ սրտում մի դատարկություն կա, որը չի կարող լցվել դրանց պատճառած ուրախությամբ: Մեր սիրտը ուրիշ տեսակի ուրախություն է փնտրում, որը չի կարող տալ ո՞չ ամուսինը, ո՞չ կինը, ո՞չ ուսումը, ո՞չ փողը, ո՞չ կարիերան, ո՞չ գիտությունը...., երկրի վրա ոչինչ և ոչ մի արարած: Այդպիսի ուրախության աղբյուրն Աստված է:

Իսկ ո՞ւմ է տալիս և ե՞րբ: Տալիս է նրանց, ովքեր հավատով ընդունում են իր Որդուն: Ուրախությունն Աստված տալիս է ոչ միայն որպես նշան փրկվելու պահին, այլև որպես մեզ հետ մնացող օրինություն: Հիշենք, որ ուրախությունը Սուրբ Հոգու պտուղներից մեկն է, և այն ոչ թե ժամանակավոր է, այլ մնայուն:

Ուրախությունը մեր սրտում շատ զգայուն է. դա նման է նուրբ սպիտակ աղավնու, որ առավտայան գալիս-նստում է մեր տան պատուհանագողին: Մենք ուզում ենք նայել նրան, մոտենում ենք պատուհանին, սակայն աղավնին թռչում հեռանում է:

Սրտի ուրախություն ասելով հասկանում ենք այնպիսի մի ուրա-

խություն, որը չի ազդվում պարագաներից, մարդկանցից, միջավայրից: Այն ներքին օրինություն է և զինի խմելու, երաժշտություն լսելու, հումորային հաղորդում դիտելու, հեռավոր բարեկամից ժառանգություն ստանալու, արտերկիր մեկնելու կարիք չունի: Այն մնայուն է: Այն՝ երբեմն փոքր հոգար, անհաճախտությունը, փոքր մտահոգությունը մեր սրտից հեռացնում են ուրախությունը, այն նվազում է տարրեր փորձությունների, նեղությունների ժամանակ (Ա Պետ. 1:6), սակայն իշխենք, որ այդ բոլորն անցնելու են, ու հավիտենական ուրախություն ենք ունենալու:

Եկեք անդրադանակ Աստծո Խոսքում նշված հոգևոր ուրախության տեսակներին:

- 1. Փրկության ուրախություն:** Երբ անձը փրկվում է, նրա սիրտը լցվում է այս ուրախությամբ: Ուրախանում է ոչ միայն ինքը, այլև Երկնքի հրեշտակները:
- 2. Մեղքերի քողության ուրախություն (Սղմ. 32:1):** Մեղքերի ներում չունեցող անձը տրտմած է լինում, բայց քողությունն իր հետ քերում է մեծ ուրախություն:
- 3. Մեր անոնները Կենաց գրքում գրվելու ուրախություն (Ղուկ. 10:20):** Անոնը Գրքում գրվելը ապահովության իմաստ ունի: Երբ գիտես, որ անոնի մի ցանկում գրված է, վստահ ես լինում, որ քեզ հասանելիքը ստանալու ես:
- 4. Միփարության ուրախություն (Սղմ. 94:19):** Այս միփարությունը որտեղից էր ստանում սաղմոսերգուն, երբ վշտացած, նեղված ու հոգսերի մեջ էր: Աստծո Խոսքից: Հաճախ միփարություն ենք փնտրում Աստծո զավակների խոսքերում, մինչդեռ նախ պետք է փնտրենք Աստծո Խոսքում: Իհարկե, սխալ չէ Աստծո զավակներին դիմելը, հատկապես եթե նրանք ունեն միփարելու պարզեցնելու, սակայն ամենամիխարիչ խոսքերը Աստծունն են:
- 5. Հաշտության ուրախություն (Հոռմ. 5:1):** Երբ անձը Քրիստոսով Աստծուն է մոտենում, նա հաշտվում է Նրա հետ, ինչպես կարում ենք Կող. 1:21-22-ում:

6. **Արդարացման ուրախություն:** Մեղավոր էի, արդ արդար եմ. սա ինձ ուրախություն է պարզելում:
7. **Որդեգրության ուրախություն:** Աստված մեզ որդիներ դարձրեց. Նա դարձավ մեր Հայրը:
8. **Ժառանգության ուրախություն:** Մենք Քրիստոսի ժառանգորդներն ենք:
9. **Կատօն խոստումներն ունենալու ուրախություն:** Հիմ Կտակարանում Աստծո խոստումները հիմնականում Խրայելինն են, բայց Քրիստոսով Նոր Կտակարանի խոստումները մերը դարձան: «Եվ սա է այն խոստումը, որ Ինքը մեզ խոստացավ, այսինքն՝ հավիտենական կյանքը» (Ս Հովհ. 2:25): «Որոնցով մեզ են տրված ամենամեծ ու թանկագին խոստումները...» (Բ Թետ. 1:4):
10. **Աղոքքների պատասխաններ ստանալու ուրախություն (Մատթ. 21:22):** Հիսուսն ասաց. «Եվ ինչ որ դուք խնդրեք Իմ անունով, Ես պիտի անեմ դա, որ Հայրը փառափորվի Որդու մեջ» (Հովհ. 14:13):
11. **Չարչարանքի ուրախություն (Մատթ. 5:12, Գործը 5:41, Երլ. 12:2):** Յուրահատուկ ուրախության մի տեսակ, որ ոչ բոլոր քրիստոնյաներին է հասանելի:

Վարդան Սարգսիսյան